Funded by the European Union

EU4Environment
Green Economy in Eastern Partner Countries

Հայաստանում ռեսուրսների արդյունավետ ու ավելի մաքուր արտադրության զարգացում

ՌԱՄԱ մեթոդաբանություն

Ռեսուրսների արդյունավետ ու մաքուր արտադրությունը (ՌԱՄԱ) կանխարգելիչ բնապահպանական ռազմավարությունների համապարփակ և շարունակական կիրառումն է **գործընթացների, ապրանքների ու ծառայությունների** արդյունավետությունը բարձրացնելու և մարդկանց ու շրջակա միջավայրի վրա ռիսկերը նվազեցնելու համար: ՌԱՄԱ նպատակն է արտադրել ավելի քիչ ռեսուրսներով և միաժամանակ նվազագույնի հասցնել շրջակա միջավայրի վրա ազդեցություններն ու բարձրացնել ընդհանուր արտադրողականությունը: **Փոքր ու միջին ձեռնարկությունների (ՓՄՁ-ներ)** համար ՌԱՄԱ մեթոդաբանությունն արդյունավետ գործիք է ծախսերը նվազեցնելու, ինչպես նաև ՓՄՁ-ների մրցակցային առավելությունները բարելավելու ու էկոլոգիապես մաքուր գործելակերպ կիրառելու համար: Ինչպես նաև, ՌԱՄԱ-ն համարվում է ՓՄՁ-ների շրջանում շրջանաձև տնտեսության սկզբունքների ներդրման և խթանման արդյունավետ գործիք:

«ՍՆԵԿԱՐՄ» ՍՊԸ - ՍՆՆԴԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպության մասին

Գտնվելու վայր՝ Երևան, Ներքին Չարբախ
Հիմնական ապրանքատեսակներ՝ Չորահաց, կարտոֆիլի չիպսեր, քաղցր եգիպտացորենի ձողիկներ և տարբեր տեսակի խմորեղեն
Աշխատակիցների քանակ՝ 10
Հիմնական շուկան՝ Հայաստան
Հիմնադրման տարեթիվ՝ 2006

«Սնեկարմ» ՍՊԸ-ն հիմնադրվել է 2006 թվականին: Ընկերությունը զբաղվում է սննդամթերքի, հիմնականում չորահացի, կարտոֆիլի չիփսերի, եգիպտացորենի ձողիկներ և տարբեր տեսակի խմորեղենի արտադրությամբ: Ապրանքները վաճառվում են Հայաստանում: Արտադրանքի ընդհանուր ծավալը ամսական 9 տ է: Ընկերությունը ծրագրի սկզբում չուներ հստակ բնապահպանական քաղաքականություն, սակայն ՌԱՄԱ ծրագրի շրջանակներում իրականացվել են մի շարք բնապահպանական/ՌԱՄԱ միջոցառումներ, ինչպիսիք են LED լամպերի օգտագործումը, ջրի խնայողության համար մաքրման համակարգի արդիականացումը, հացի մնացորդների որպես կենդանիների կեր պատրաստումը և կեղտաջրերի ուղղակի հոսքից խուսափելու համար արտադրական կեղտաջրերի հավաքումը և կուտակումը: Այնուամենայնիվ, վերը նշված բոլոր բնապահպանական մոտեցումները եղել են հազվադեպ և ոչ արդյունավետ: Ընկերության արտադրանքի նախնական գնահատումից հետո ցանկություն է առաջացել սկսել բնապահպանական քաղաքականության մշակումը և որոշ ՌԱՄԱ միջոցառումների իրականացումը (արևային ՖՎ վահանակների տեղադրում, պլաստիկ թափոնների վերամշակում), ինչը անշուշտ կբարձրացնի ընկերության վարկանիշը: Ավելի էներգաարդյունավետ արտադրություն ձեռք բերելու շարժառիթներով ընկերությունը մասնակցել է ՌԱՄԱ ցուցադրական նախագծին: Այս հրապարակումը ցույց է տալիս ընկերության փորձը, որը զեկուցվել է 2023 թվականին իրականացված մոնիթորինգից հետո:

ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1
1 ՌԱՄԱ միջոցառման իրականացում:

2
Ընկերության կողմից պետք է մշակվի գործողությունների ծրագիր՝ մյուս 2 ՌԱՄԱ միջոցառումների հետագա իրականացման համար:

3
Կեղտաջրերի արտահոսքը շրջակա միջավայր կկրճատվի 95%-ով:

4
Օգտագործված էներգիայի աղբյուրներից հաշվարկված տարեկան 33,6 տ CO_2-ի ընդհանուր արտանետումները ամբողջությամբ կվերացվեն:

Գործողությունն իրականացվել է
OECD BETTER POLICIES FOR BETTER LIVES | UNECE | UN environment programme | UNIDO | THE WORLD BANK IBRD • IDA | WORLD BANK GROUP

Նախագծի մոտեցումները

ՌԱՄԱ գնահատումն ուսումնասիրել է արտադրամասը և հայտնաբերել ՌԱՄԱ հետևյալ միջոցառումները:

ՌԱՄԱ տարբերակ 1: Չորահացի, խմորեղենի, կարտոֆիլի չիպսերի, քաղցր եգիպտացորենի ձողիկների արտադրության ժամանակ առաջացած կեղտաջրերի համար մաքրման կայանի կառուցում: Արտադրության կեղտաջրերի մաքրում և մաքրված ջրի 20-30%-ի վերաօգտագործում որպես տեխնիկական ջուր (արտաքնոցներում օգտագործելու, արտաքին տարածքների մաքրման, գործարանին կից փոքրիկ այգու ոռոգման նպատակով): Ջուրը խնայելու համար կպահանջվի համակարգի և սարքավորումների ամբողջական փոխարինում (առաջարկվող կեղտաջրերի մաքրման կայանը ներառում է բազմաֆիլտրման/մշակման փուլեր (աէրոբ, անաէրոբ, ուլտրամանուշակագույն, տեղումներ և այլն): «Սնեկարմ»-ի ներկայացուցիչները պայմանավորվել են ներդրումներ կատարել կեղտաջրերի մաքրման կայանի տեղադրման մեջ՝ բարձրացնելով ընկերության հեղինակությունը: Ընկերության մոտավոր տնտեսական խնայողությունները կկազմեն տարեկան մոտ 6000 եվրո:

ՌԱՄԱ տարբերակ 2: Վերականգնվող էներգիայի օգտագործում (արևային մարտկոցների տեղադրում): «Սնեկարմ»-ում արտադրական գործընթացը հնարավորություն է տալիս բնական գազի օգտագործումը փոխարինել էլեկտրաէներգիայով: Միջոցառումը միաժամանակ կլուծի տնտեսական (բնական ռեսուրսների օգտագործման բացառում՝ գազ) և բնապահպանական (ածխաթթու գազի արտանետման կրճատում) խնդիրները: Նոր ՖՎ համակարգի արտադրած էլեկտրաէներգիան կարող է ծածկել ընկերության էլեկտրաէներգիայի ողջ պահանջարկը, ներառյալ տարածքի լուսավորությունը:

ՌԱՄԱ տարբերակ 3: Պլաստիկ թափոնների վերահսկում: Կազմակերպության պլաստիկ թափոնները կտեղափոխվեն ԿՏԲԿ ԵՄ BSB 1138 APRA ծրագրի շրջանակներում հիմնված պլաստիկ թափոնների հավաքում և տեղափոխում իրականացնող ընկերություն: Թափոնների առանձին հավաքման իրականացումը օգուտ կբերի և կբարձրացնի ընկերության վարկանիշը:

ՊԱՀՊԱՆԵԼՈՎ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ Հիմնական ՌԱՄԱ գործողություններ

Մոնիտորինգի հաշվետվության վերջում ընկերության անձնակազմի կողմից իրականացվել է 1 ՌԱՄԱ միջոցառում: Ընկերության կողմից պետք է մշակվի գործողությունների ծրագիր՝ մյուս 2 ՌԱՄԱ միջոցառումների հետագա իրականացման համար:

Հիմնական տնտեսական ցուցանիշներ

ՌԱՄԱ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ	ՆԵՐԴՐՈՒՄ(դրամ)	ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ (եվրո/տարի)	ԵՏԳՆՄԱՆ ԺԱՄԿԵՏ (տարի)
3 ՌԱՄԱ տարբերակներ:	42.5մլն	27, 115	3

Ռեսուրսների խնայողություն

ՌԱՄԱ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ	ՆՅՈՒԹԵՐ (Տ/ՏԱՐԻ)	ԷՆԵՐԳԻԱ (ԿՎՏԺ/ՏԱՐԻ)
3 ՌԱՄԱ տարբերակներ:	108	2290

Աղտոտվածության ընդհանուր նվազում

ՌԱՄԱ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ	CO_2-EQ (Տ/ՏԱՐԻ)
3 ՌԱՄԱ տարբերակներ:	33.6

Ընկերության ղեկավարությունը և անձնակազմը կարևորում են ՌԱՄԱ մեթոդաբանությունը և պատրաստակամ են կիրառել այն արտադրության գործընթացում: Տնօրինությունը քայլեր է ձեռնարկում նախաձեռնելու Բնապահպանական քաղաքականության մշակումը: **«Սնակարմ» ՍՊԸ**-ն արդեն հաջողությամբ իրականացրել է 1 ՌԱՄԱ տարբերակ և մշակում է գործողությունների և բիզնես ծրագրեր՝ ևս 2 ՌԱՄԱ տարբերակ իրականացնելու համար: Շարունակաբար կիրառելով ՌԱՄԱ միջոցառումներ՝ ընկերությունը զգալիորեն բարելավել է արտադրանքի որակը, աշխատանքային անվտանգությունը և ընդհանուր բնապահպանական ցուցանիշները: «ՍնեկԱրմ» ՍՊԸ-ն շահագրգռված է շարունակել իր ընկերությունում ընթացիկ ՌԱՄԱ միջոցառումների իրականացումը՝ ավելի մեծ շուկա գրաղեցնելու, բիզնես, սոցիալական և բնապահպանական օգուտներ ձեռք բերելու համար: Ընկերության կողմից ՌԱՄԱ միջոցառումներ կիրառելուց հետո ձեռք բերված օգուտները ներառում են արտադրության գործընթացի օպտիմալացում, ռեսուրսների վերամշակման և էներգիայի օգտագործման և վերականգնվող էներգիայի առավելագույն օգտագործման նվազեցման նոր սարքավորումների տեղադրում, ինչպես նաև աշխատանքային գործընթացի բարելավում և ընկերության ածխածնային ոտնահետքի կրճատում:

ՌԱՄԱ-ի ներդրումը եղել է ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրերի մաս՝ «Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում» (EAP Green) (2013-2017) և «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» (2019-2022), որոնք իրականացվել են ՄԱԿԱԶԿ-ի կողմից: Այս համատեքստում «Սնեկարմ» ՍՊԸ-ն միացել է ՌԱՄԱ ուսուցման ու աջակցության ծրագրին: «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» ծրագիրն օգնում է Արևելյան գործընկերության գործընկեր վեց երկրներին պահպանել իրենց բնական կապիտալն ու բարձրացնել մարդկանց բնապահպանական բարեկեցությունը՝ աջակցելով շրջակա միջավայրին առնչվող գործողություններին, ցուցադրելով և բացելով ավելի կանաչ աճի հնարավորությունները և ստեղծելով շրջակա միջավայրի ռիսկերն ու ազդեցությունները ավելի լավ կառավարելու մեխանիզմներ: Ավելին իմանալու համար այցելե՛ք **www.eu4environment.org:**

Այս հրատարակությունը պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ: Դրա բովանդակությունը բացառապես ՄԱԿԱԶԿ-ի պատասխանատվությունն է և պարտադիր չէ, որ արտահայտի Եվրոպական միության տեսակետները:
© – 2023 – ՄԱԿԱԶԿ: Բոլոր իրավունքները պաշտպանված են. Լիցենզավորված է Եվրամիությանը՝ համաձայն պայմանների:

ՄԱԿ-ի Արդյունաբերական Զարգացման Կազմակերպություն
տիկին Տատյանա Չերնյավսկայա
«ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» ծրագրի ղեկավար
Հեռ: +43 1 26 0 26 5520
Էլ. հասցե: t.chernyavskaya@unido.org

Կոնտակտներ՝ Կովկասի Տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի Հայաստանի ազգային գրասենյակ
Հասցե: Այգեստան փ.7, շենք N 2, 0010, Երևան
Կայք: www.recp.am
Հեռ: +374-11 57-51-48